

*Համարը N 2*

*Տիպը Պաշտոնական  
պարզաբանում*

*Մկզբնադրությունը ՀՀԳՏ 2009.11.16/30(348)  
Ընդունող մարմինը Հեռուստատեսության և  
ռադիոյի ազգային  
հանձնաժողով*

*Ստորագրող մարմինը Հեռուստատեսության և  
ռադիոյի ազգային  
հանձնաժողովի նախագահ*

*Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 05.11.2009*

*Տեսակը Մայր*

*Կարգավիճակը Գործում է*

*Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 05.11.2009*

*Ստորագրման ամսաթիվը 05.11.2009*

*Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը*

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2009 ԹՎԱՅԿԱՆԻ N 2 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 3 ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ»**

## **ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

5 նոյեմբերի 2009 թ

N 2

### **Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 3 ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հեռուստատառադիոհեռարձակումը էլեկտրամագնիսական ալիքների միջոցով պատկերների և (կամ) հնչյունների կամ դրանց պայմանանշանների այնպիսի տարածումն է հաղորդագծով (ներառյալ՝ կաբելային /լարային/ կապով) կամ առանց հաղորդագծի (ներառյալ՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ արբանյակային կապով եթեր հեռարձակումը), որ այդ պատկերները կամ հնչյունները ընկալելի լինեն հասարակությանը: Հեռարձակում է համարվում նաև կողավորված ազդանշանների տարածումը, եթե դրանց ապակողավորման միջոցները հեռուստատառադիոլսարանին տրամադրել է հեռարձակող կազմակերպությունը, կամ տրամադրվել է նրա համաձայնությամբ: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի համաձայն արտոնագիրը (լիցենզիան) միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս իրականացնել հեռուստատառադիոհաղորդումների հեռարձակում: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 7-րդ մասի համաձայն հեռուստատառադիոընկերությունը (հեռուստաընկերությունը

կամ ռադիոընկերությունը) այն իրավաբանական անձն է, որն արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա (բացառությամբ Հանրային հեռուստառադիոընկերության) հեռարձակում կամ վերահեռարձակում է զանգվածային տեղեկատվություն՝ օգտագործելով սեփականության, վարձակալական կամ անհատույց օգտագործման իրավունքով իրեն պատկանող հեռուստառադիոսարքավորումներ և պատասխանատվություն է կրում արտոնագրման (լիցենզավորման) պայմանների, սույն օրենքի և այլ իրավական նորմերի կատարման համար: Հետևապես, հեռուստառադիոընկերությունը հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում իրականացնող կազմակերպություն է: Ինչ վերաբերում է հեռարձակմանը և վերահեռարձակմանը, ապա վերահեռարձակումը ևս հեռարձակում է, ինչը հստակ բխում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 1-ին մասից և 15-րդ մասում տրված վերահեռարձակման սահմանումից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87 հոդվածով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պաշտոնապես **պարզաբանում է.**

Հայաստանի Հանրապետության տարածքում հեռուստառադիոհաղորդումների վերահեռարձակման համար միակ օրինական հիմքը հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիան է, բացառությամբ միջպետական պայմանագրերով նախատեսված դեպքերի:

**Հեռուստատեսության և ռադիոյի  
ազգային հանձնաժողովի նախագահ**

**Գ. Ամալյան**